Երրորդ հաղորդում

Հորդանան գետն անցնելը և մարտնչելու պատրաստվելը

Գրվածքների ընթերցում. Հս 3:1–4:24, 5:1-10

I. Հեսուի գրքի 3:1–4:24-ը գրառում է Իսրայելի ժողովրդի՝ Հորդանան գետն անցնելու մասին.

Ա. Երբ Իսրայելի ժողովուրդը տեսավ Աստծու Ուխտի Տապանակը և ղևտական քահանաներին, որոնք Տապանակն էին կրում, իր տեղից ճանապարհ ընկավ և հետևեց դրան՝ 3:3, 6.

1. Տապանակը Քրիստոսի՝ որպես Եռամեկ Աստծու մարմնավորման նախատիպ էր՝ Ելց 25:10-22:
2. Երբ Աստծու Տապանակը գնում էր Իսրայելի զավակների հետ, Եռամեկ Աստված գնում էր նրանց հետ՝ առաջնորդելով նրանց և, ուստի, առաջինը ջուրը մտավ՝ Հս 3:8, 11:
3. Այն, որ Տապանակը քահանաների ուսերին էր, ցույց է տալիս, որ իբրև նախատիպ՝ Տապանակը կրող քահանաները Եռամեկ Աստծու հետ մեկ ամբողջություն դարձան՝ խ. 3.
   ա. Նրանք և Աստված մեկ ընդհանրական անձ էին՝ ընդհանրական Աստվածամարդ:
   բ. Աստված քայլում էր նրանց քայլելով, և նրանք քայլում էին Աստծու քայլելով:

Բ. Հորդանան գետը Քրիստոսի մահվան և հարության նախատիպ է՝ Գրծ 2:23-24, 3:15.

1. Տիրոջ ուխտի Տապանակն անցավ ժողովրդի առջևից, մտավ Հորդանան՝ Հս 3:11:
2. Այն, որ Տապանակը մտնում է Հորդանան և դուրս է գալիս այնտեղից, մատնանշում է Քրիստոսի մահը և հարությունը՝ խ. 15, 4:11:

Գ. Այն, որ Իսրայելն անցավ Հորդանան գետը, ոչ թե հավատացյալների ֆիզիկական մահվան նախատիպ է, այլ Քրիստոսի մահը փորձառաբար ապրելու, որում հին մարդը վերացվում է և թաղվում՝ Հռմ 6:3-6, Գղտ 2:20.

1. Նախատիպերի համակարգում Հորդանան գետը մատնանշում է Քրիստոսի մահը, որի մեջ հավատացյալները ներմկրտվել են՝ Հռմ 6:3-4:
2. Իսրայելի զավակներն անցան Քրիստոսի մահվան միջով, որպեսզի թաղեն իրենց հին մարդուն և Քրիստոսի մեջ դառնան նոր մարդ՝ Բ Կրթ 5:17.
   ա. Նրանք պատրաստ էին մտնելու բարի երկիրը, տիրելու երկրին՝ որպես իրենց սեփականության, և քանանացիների դեմ պատերազմ մղելու. սակայն նրանք իրենց հին մարդու մեջ չէին կարող հաղթանակ տանել:

բ. Որպես նախատիպ՝ նրանք թաղվեցին Քրիստոսի մահվան մեջ և հետո Քրիստոսի հարության մեջ հարություն առան ու Քրիստոսի մեջ դարձան նոր մարդ՝ հոգևոր պատերազմը մղելու համար՝ Եփս 6:10-20:

գ. Մենք պետք է գիտակցենք, որ մեր հին մարդը՝ մեր բնական մարդը, Քրիստոսին ձեռք բերելու համար որակավորված չէ հոգևոր պատերազմը մղելու. Քրիստոսի մեջ մենք այլևս ոչ թե հին մարդն ենք, այլ նոր մարդը՝ 4:22-24:

3. Հավատացյալների մկրտությունը Քրիստոսի մահվան մեջ, որպես Հորդանան գետն անցնելը, հավատացյալներին առաջնորդում է Քրիստոսի հարության մեջ՝ Հռմ 6:3-6, Կղս 2:12.

ա. Թաղման տեսանկյունից՝ մկրտությունը վերջ է դնում մեր հին մարդուն:

բ. Հարության տեսանկյունից՝ մկրտությունը ծնունդ է տալիս մեր հոգուն, որպեսզի մենք կարողանանք Քրիստոսի մեջ աստվածային կյանքով կենդանացվել՝ Հվի 3:6, 15, Հռմ 8:10:

գ. Հարության ոլորտում մենք վայելում ենք Քրիստոսին՝ որպես համաբովանդակ բարի երկրի, որի մեջ քայլում ենք և նույնիսկ արմատավորվում ու կառուցվում Աստծու տնտեսության կատարման համար՝ 6:4, Կղս 2:7:

Դ. Այն, որ Իսրայելն անցավ Հորդանանն ու մտավ բարի երկիրը, կապված է Իսրայելի՝ բարի երկրին տիրելու և վայելելու հետ, ինչը խորհրդապատկերում է հավատացյալների՝ Քրիստոսի մեջ եղող օրհնությունների հարստությունը գործնականորեն փորձառաբար ապրելը, ինչպես բացահայտված է Եփեսացիներին ուղղված թղթում՝ Հս 4:1:

Ե. Այն, որ Իսրայելը Հորդանանն անցնելուց հետո բարի երկիրը մտավ, խորհրդապատկերում է հավատացյալների՝ երկնային ոլորտներին տիրելը, որտեղ Սատանան և նրա խավարի զորությունն են՝ Եփս 2:2, 6:12:

II. Հորդանանից տասներկու քար հանվեց և Հորդանանում ուրիշ տասներկու քար կանգնեցվեց՝ Հս 4:3-9.

Ա. Հորդանանից հանված տասներկու քարերը խորհրդապատկերում են նոր Իսրայելի տասներկու ցեղերին՝ խխ. 3-7:

Բ. Հորդանանի ջրերից քարերը հանելը խորհրդապատկերում է մահից հարությունը՝ խ. 7.

1. Այս տասներկու քարերը նշան էին, որը ցույց էր տալիս, որ «հարություն առած» նոր Իսրայելը մահվան ջրերով անցնելու վկայություն էր լինելու՝ խխ. 6-7, 21-24:

2. Սա այն բանի նախատիպն է, որ հավատացյալները Քրիստոսի հետ փորձառաբար ապրում են մահից հարություն առնելը՝ Հռմ 6:3-4:

Գ. Մյուս տասներկու քարերը, որոնք կանգնեցվեցին Հորդանանի մեջտեղում, խորհրդապատկերում են Իսրայելի տասներկու ցեղերին իրենց հին կյանքով և հին բնությամբ՝ Հս 4:9.

1. Հեսուն այս տասներկու քարերը կանգնեցրեց Հորդանանի մեջտեղում, որտեղ Տապանակն էր, ինչը խորհրդապատկերում է այն, որ Տերն ուզում էր՝ Իսրայելն իր հին բնությամբ մնա Հորդանանի մահվան ջրերի տակ:
2. Սա այն բանի նախատիպն է, որ հավատացյալների հին մարդը պետք է մնա Քրիստոսի մահվան մեջ՝ Հռմ 6:6, Գղտ 2:20, Փլպ 3:10:

Դ. Տասներկու քարերի երկու խմբերը խորհրդապատկերում են այն, որ մեր հին մարդը թաղված է, և մեր հարուցանված նոր մարդն ապրում և աշխատում է Եռամեկ Աստծու հետ որպես մեկ. սա համապատասխանում է Եփեսացիներին ուղղված թղթի 2:1, 4-6, 15 և 10-ի խոսքերի հայտնությանը:

III. Վկայության Տապանակը կրող քահանաները ամուր կանգնած էին ցամաքին՝ Հորդանան գետի հատակին, մինչև որ ամբողջ ժողովուրդը լիովին անցավ Հորդանանը՝ Հս 3:8, 13-15, 17, 4:10-11, 15-18.

Ա. Տապանակը կրող քահանաներն առաջինն էին մտել ջուրը և վերջինը դուրս եկել ջրից, նրանք սպասում էին գետի հատակին, մինչև Աստծու ամբողջ ժողովուրդն անցներ՝ 3:17, 4:15-16:

Բ. Աստված քահանաներին դրել էր մահվան վայրում, որպեսզի իսրայելացիները ճանապարհ ունենային դեպի կյանքի երկիր՝ խ. 10.
1. Գետի հատակը մահվան դիրքն է. այն հարմարավետ կամ գրավիչ չէ:
2. Գետի հատակին Վկայության Տապանակը կրելը մեծ չարչարանք է:
3. Տերը փնտրում է մի խումբ մարդկանց, ովքեր Հս 3–4-րդ գլուխների քահանաների պես կմտնեն ջուրը, այսինքն՝ առաջինը կմտնեն մահվան մեջ՝ 3:8, 17.
   ա. Նրանք պատրաստակամ են, որ խաչն առաջին հերթին իրենց վերջ դնի, որ կանգնեն մահվան վայրում, որպեսզի եկեղեցին գտնի կյանքի ճանապարհը՝ Բ Կրթ 4:10-12:
   բ. Աստված նախ մեզ պետք է մահվան վայրում դնի, նախքան ուրիշները կկարողանան կյանք ստանալ՝ Հվի 2:19, 12:24, Ա Կրթ 15:36:

Գ. Քանի որ Պողոս առաքյալը մեռնելով էր կյանք սպասավորում, նա կարող էր վկայել՝ ասելով. «Այնպես որ մահը մեր մեջ է գործում, իսկ կյանքը՝ ձեր մեջ»՝ Բ Կրթ 4:12.
1. Առաքյալների աշխատանքը մահվան աշխատանք է, որը գործում է նրանց մեջ, որպեսզի կյանքը կարողանա գործել հավատացյալների մեջ՝ խխ. 10-12:
2. Մահվան գործելու հետևանքը՝ արդյունքը, մեր մեջ սքանչելի է. դա կյանքն է ուրիշների մեջ՝ խ. 12:
3. Նոր ուխտի սպասավորության իսկական աշխատանքը կապված չէ աշխատելու հետ. այն կապված է մեռնելու հետ՝ խ. 1, 3:8-9, 5:18:

4. Տիրոջ վերականգնման մեջ մենք պետք է մեռնենք, որպեսզի կյանքը գործի ուրիշների մեջ. հետևաբար մեր մեռնելը մեր աշխատելն է՝ 4:12:
5. «Տիրոջը պետք չէ, որ դուք Իր համար աշխատանք իրագործեք: Նրան պետք է, որ դուք մեռնեք: Եթե մեռնեք, կյանքը կգործի ուրիշների մեջ: Դուք մեռնելով ուրիշներին կյանք կսպասավորեք: Ուստի մեր աշխատանքը մահվանը տրվելն է»՝ «Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի կենսաուսումնասիրություն», էջ 328:

IV. Թեև իսրայելացիները կարգավարժվել էին, ուսուցանվել և որակավորվել, բայց Հորդանանն անցնելուց հետո նրանց դեռ հետագա նախապատրաստություն էր պետք հարձակումից առաջ՝ Հս 5:1-10.

Ա. Հորդանան գետն անցնելը Քանանի յոթ ցեղերի դեմ պատերազմելու համար էր՝ 4:12-13:

Բ. Քանի որ Հեսուն մասնակցում էր Հորդանանն անցնելու հրաշքին, նա ամրապնդվեց և մյուսներին առաջնորդեց դիվային քանանացիների դեմ մղվող պատերազմում՝ 3:6-7, 10, 4:14:

Գ. Եհովան Հեսուին պատվիրեց «կրկին թլփատել Իսրայելի զավակներին՝ երկրորդ անգամ»՝ 5:2.

1. Թլփատության նպատակն Աստծու ընտրյալ ժողովրդին նոր ժողովուրդ դարձնելն էր, որպեսզի նրանք ժառանգեին Աստծու խոստացված երկիրը՝ հմմտ Ծնդ 17:7-12:
2. Նոր Իսրայելի թլփատությունը Քրիստոսի թլփատության նախատիպ է, որը կատարվում է Նրա մահով և կիրառվում հավատացյալների հանդեպ՝ մսեղիի մարմինը հանելու համար, որպեսզի նրանք ժառանգեն հարության մեջ եղող Քրիստոսին՝ որպես Աստծու կողմից իրենց հատկացված բաժնի՝ Կղս 2:11-12, 1:12:
3. Հոգևոր թլփատությունը Քրիստոսի մահվան մեջ թաղվելու շարունակությունն է՝ Հռմ 6:3-4.
   ա. Հորդանան գետն անցնելու միջոցով հին Իսրայելը թաղվեց, և մի նոր Իսրայել հայտնվեց. սա Աստծու կատարած օբյեկտիվ աշխատանքն էր:
   բ. Իսրայելի զավակների թլփատվելը նրանց գործնական կիրառումն էր այն բանի, ինչ Աստված արել էր Հորդանան գետն անցնելու ժամանակ՝ Հս 5:2-9:
4. Նոր Կտակարանում հոգևոր թլփատությունը Քրիստոսի մահվան մշտական կիրառումն է մեր մսեղիի հանդեպ՝ Փլպ 3:3, Կղս 2:11.
   ա. Թեև իրականում մենք մկրտվել ենք Քրիստոսի մահվան մեջ և թաղվել ու հարուցանվել Նրա հետ, գործնականում դեռ պետք է խաչի թլփատությունն օրեցօր Հոգով կիրառենք մեր մսեղիի հանդեպ՝ Հռմ 8:13, Գղտ 5:24:
   բ. Սա է Քրիստոսի մահվան և թաղման մեջ մնալու իրականությունն ու գործնականությունը:

Դ. Իսրայելի զավակները ճամբարեցին Գաղգաղայում և Երիքովի դաշտերում Զատիկն արեցին՝ Հս 5:10.

1. Զատիկը տոնում էին, որպեսզի հիշեին, թե ինչպես Եհովան Իսրայելին փրկագնեց նրանց առաջնեկ որդիների վրա եղած մահվան դատաստանից, ինչպես նաև, թե ինչպես Եհովան Իսրայելին փրկեց Եգիպտոսից ու փարավոնի բռնակալությունից՝ Ելց 12:3-7, 11-14, 14:13-30:
2. Զատիկն անելը ցույց էր տալիս, որ ճիշտ ինչպես Եհովան Իսրայելին փրկեց փարավոնից ու Եգիպտոսից, այնպես էլ Նա կկործանի Քանանի ցեղերին և նրանցից կազատի Իսրայելին՝ Հս 5:10:
3. Իսրայելի՝ Զատիկն անելն այն բանի նախատիպ է, որ հավատացյալները Տիրոջ սեղանի հավաքույթ են անում՝ հիշելու համար Տիրոջը՝ որպես իրենց Փրկագնիչի և Փրկչի՝ Մտթ 26:26-28:

©2021 *LivingStreamMinistry*